ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի և Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի 2020 թվականի մարտի «11»-ի որոշման (արձ. № 35) համաձայն Հյուսիսային համալսարանում ուսանողական նպաստի ձևով իրականացվող ուսման վարձի փոխհատուցման (անվճար համակարգ) և զեղչերի կիրառման գործընթացը կանոնակարգելու վերաբերյալ

20.05.22020թ. Թիվ 61/0

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն Հյուսիսային համալսարանում ուսանողական նպաստի ձևով իրականացվող ուսման վարձի փոխհատուցման (անվճար համակարգ) և զեղչերի կիրառման գործընթացը կանոնակարգելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել, որ

1.1. Համապատասխան մասնագիտությունների գծով պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում տրվում է 2012 ապրիլի 26–ի ՀՀ կառավարության N 597-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգով (ըստ բակալավրի կրթական ծրագրի) Հյուսիսային համալսարան ընդունված ուսանողներին՝ մրցույթի արդյունքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին համապատասխան (անվճար համակարգ): Հետագա ուսումնառության ընթացքում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցումը տրվում է նշված կարգով առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողներին՝ ըստ առաջադիմության փոխատեղման մրցույթի արդյունքում, ռեկտորին ներկայացված զեկուցագրի հիման

վրա, որին կից ներկայացվում է համապատասխան հրամանի նախագիծը երկու օրինակից:

1.2. Համապատասխան մասնագիտությունների գծով Հյուսիսային համալսարանի կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում (ներբուհական անվճար համակարգ) տրվում է մրցույթի արդյունքներով առկա և հեռակա ուսուցմամբ (ըստ բակալավրի կրթական ծրագրի) Հյուսիսային համալսարան ընդունված ուսանողներին՝ ընդունվածների թվի 10 տոկոսի չափով: Մրցույթում ներքոշարադրյալ առաջնայնությամբ հաղթող են ճանաչվում՝ քննական առարկաներից առավել բարձր գնահատական ունեցող դիմորդները, տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդները, մեդալակիր դիմորդները, դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաներում առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդները, տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդները, հեռակա ուսուցման դեպքում՝ ավելի վաղ դիմած դիմորդները: Ներբուհական անվճար համակարգում ուսումնառությունը շարունակվում է բուհի կողմից ուսման վճարի փոխհատուցմամբ, եթե անընդմեջ կիսամյակների ընթացքում ուսանողի ՄՈԳ–ը կազմում է առնվազն 95 միավոր: Ներբուհական անվճար համակարգում առաջին կուրսի 1–ին կիսամյակում ուսման վարձի փոխհատուցումն իրականացվում է մրցույթի արդյունքների ամփոփումից հետո 3–օրյա ժամկետում ընդունող հանձնաժողովի, իսկ հետագա կիսամյակների համար՝ կիսամյակին հաջորդող 5–օրյա ժամկետում բուհի ուսանողների դեպքում դեկանների կողմից, ռեկտորին հասցեագրած զեկուցագրերի հիման վրա, որոնց կից ներկայացվում է համապատասխան հրամանների նախագծերը երկու օրինակից:

1.3. Հյուսիսային համալսարանում իրականացվում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում (զեղչերի համակարգ) բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով սովորող, հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին (եթե ՄՈԳ-ը բակալավրի

կրթական ծրագրի դեպքում կազմում է առնվազն 74 միավոր, մագիստրոսի կրթական ծրագրի դեպքում՝ 80 միավոր,).

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ առնվազն 50 տոկոս.

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

5) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

7) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

8) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս.

1.4. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4.1 կետի 9–րդ ենթակետի հիմքով սահմանվում է մագիստրատուրային ուսումնառության 1–ին տարվա համար 20 տոկոս զեղչ Հյուսիսային համալսարանի շրջանավարտների համար, և 50 տոկոս զեղչ Հյուսիսային համալսարանի գերազանցության դիպլոմով շրջանավարտների համար, ընդ որում, 1–ին կուրսի երկրորդ կիսամյակում 20 տոկոս զեղչը պահպանվում է, եթե 1–ին կիսամյակում ուսանողի ՄՈԳ–ը կազմել է 74 միավոր, իսկ 50 տոկոս զեղչի դեպքում՝ ՄՈԳ–ը կազմել է 80 միավոր: Նույն ենթակետի հիմքով՝ ընդունող

հանձնաժողովի կամ դեկանների առաջարկությամբ և ռեկտորի համաձայնությամբ կարող են սահմանվել մինչև 50 տոկոս զեղչեր նաև այլ կարգավիճակ ունեցող ուսանողների համար:

1.5. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում առնվազն 50 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ:

1.6. Սահմանված մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

1.7. Առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած (բացառությամբ սույն հրամանի 1.4. կետով նախատեսված զեղչի, որի դեպքում զեղչը գործում է 1–ին կիսամյակից): Ուսման վարձի փոխհատուցման հիմքերի վերացման, այդ թվում, սահմանված նվազագույն ՄՈԳ–ի նախապայմանի չապահովման դեպքում ուսանողները զրկվում են վարձի փոխհատուցման արտոնությունից:

1.8. Սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողների վարձը ուսանողական նպաստների ձևով հատուցվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքում:

1.9. Ուսման վարձի փոխհատուցման վերաբերյալ ուսանողները կիսամյակի ավարտից հետո, ոչ ուշ քան մեկշաբաթյա ժամկետում ուսման վարձի փոխհատուցման դիմում (հավելված՝ 1) են ներկայացնում ֆակուլտետի դեկանին, կցելով համապատասխան հիմքերը (հավելված՝ 2):

1.10. Դեկանը ուսումնասիրելով փաստաթղթերի համապատասխանությունը սույն հրամանի պահանջներին, համապատասխան զեկուցագիր է

ներկայացնում ռեկտորին, առաջիկա կիսամյակի համար ուսանողի ուսման վարձի փոխհատուցման անհրաժեշտության վերաբերյալ, կցելով նաև համապատասխան հրամանի նախագիծը երկու օրինակից:

1.11. Սույն հրամանով նախատեսված՝ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման վերաբերյալ ռեկտորի կողմից ստորագրված հրամանի մեկ օրինակը տրվում է ուսանողին, մյուս օրինակը կցվում է ՄՈՒՀ-ի և ուսանողի միջև կնքված ուսումնառության պայմանագրին և պահվում է այդ փաստաթղթերի պահպանման համար պատասխանատու ստորաբաժանումում:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համալսարանի ընդունելության և ֆինանսական հարցերի գծով պրոռեկտորին:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ Մ.ՄԱԿԻՉՅԱՆ

(հավելված՝ 1)

Հյուսիսային համալսարանի ռեկտոր

պարոն Մ. Մակիչյանին

Հյուսիսային համալսարանի

_____

(մասնագիտություն)

մասնագիտության ----------կուրսի ուսանող

_____

(անուն, հայրանուն, ազգանուն)

հեռ.՝ +374 _____

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Մակիչյան

Խնդրում եմ Հյուսիսային համալսարանում ուսանողական նպաստի ձևով իրականացվող ուսման վարձի ամբողջական կամ մասնակի փոխհատուցման գործընթացը կանոնակարգելու վերաբերյալ թիվ 61/0 հրամանի _____ կետի համաձայն _____ին

(անուն, ազգանուն)

տրամադրել _____ ուսումնական տարվա _____ կիսամյակի ուսման վարձի զեղչ:

Կից ներկայացնում եմ համապատասխան փաստաթղթերը:

Դիմող՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

—. —. 2023թ.

Հավելված՝ 2

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Հ/Հ	Համապատասխան գեղցչի տեսակը	Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը
1.	Սոցիալապես անապահով	• անձնագրի պատճեն, • անապահովության տեղեկանք, • տեղեկանք բնակության վայրից (տեղեկանքում պարտադիր պետք է նշված լինի ընտանիքի կազմը), • նախորդ տարվա ՄՈԳ-ը (բացառությամբ 1-ին կուրսի ուսանողների)
2.	23 տարին չլրացած 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած երեխա	• անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), • մահվան վկայականի պատճեն կամ ՔԱԿԳ-ից համապատասխան տեղեկանք, • ծննդյան վկայականի պատճեն, • ՄՈԳ
3.	23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող)	• անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), • ծնողի անձնագրի պատճեն, • ծննդյան վկայականի պատճեն, • մահվան վկայականի պատճեն կամ ՔԱԿԳ-ից համապատասխան տեղեկանք, • ՄՈԳ
4.	Մինչև մեկ տարեկան երեխայի ծնող	• անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), • երեխայի ծննդյան վկայականի պատճեն, • ՄՈԳ
5.	3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքի անդամ	• անձնագրերի պատճեններ (գրանցման էջը պարտադիր է), • ծննդյան վկայականների պատճեններ կամ բուհերից տեղեկանքներ, • ՄՈԳ
6.	1-ին կամ 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողի երեխա	• անձնագրերի պատճեններ (գրանցման էջը պարտադիր է), • ծննդյան վկայականի պատճեն, • հաշմանդամության տեղեկանք, • ՄՈԳ

7.	մարտական հերթապահություն իրականացնող զորամասում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր զինվորական ծառայություն անցած ուսանող	• անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), • զինվորական գրքույկի 1-ին և մարտական հերթապահության էջերի պատճեն, (բացակայության դեպքում տեղեկանք) • ՄՈԳ
1.6	սահմանամերձ համայնքի բնակիչ	• անձնագրի պատճեն, • տեղեկանք բնակության վայրից (տեղեկանքում պարտադիր պետք է նշված լինեն, որ վերջին 5 տարում բնակվել է տվյալ հասցեում և ընտանիքի կազմը), • ատեստատ, • նախորդ տարվա ՄՈԳ-ը (բացառությամբ 1-ին կուրսի ուսանողների)
1.7	Այլ կարգավիճակ	• անձնագրի պատճեն (գրանցման էջը պարտադիր է), • միջին գնահատական, • համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր

Ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցման զեղչի դիմումներն ընդունվում են _____ներառյալ:

Զեղչի փաստաթղթերը ներկայացնել հյուսիսային համալսարանի ընդհանուր բաժին: